«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

27 ապրիլի, 2026 թ. N 9 - Լ

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 16.6 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության գործադիր տնօրենի 2025 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված
«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2026թ. ապրիլի 27-ի N 9- Լ որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ 2025թ.
ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

		էջ
1.	ԸՆԹԱՑԻԿ ՎԻՃԱԿԸ.....	3
2.	ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ.....	7
3.	ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	9
4.	ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ.....	10
5.	ԱՅԼ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ.....	15
6.	ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	15
7.	ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ	16

1. ԸՆԹԱՑԻԿ ՎԻՃԱԿԸ

Պալատի առաքելությունն է խրախուսել Հայաստանում գործող կազմակերպությունների ֆինանսական տեղեկատվության վստահելիությունը օգտագործողների, այդ թվում՝ նաև ներդրողների մոտ: Առաքելությունն իրագործելու նպատակով Պալատը ձգտում է կատարելագործել ՀՀ-ում գործող հաշվապահների և աուդիտորների մասնագիտական կարողությունները՝ որակավորման, շարունակական կրթության, համապարփակ մասնագիտական օժանդակության և որակի հսկողության միջոցով, ինչպես նաև հաշվապահության և աուդիտի պատվիրատուների հետ մշտական փոխադարձ կապի միջոցով:

31.12.2025թ. դրությամբ Պալատի ռեեստրում գրանցված են եղել 596 ֆիզիկական անձ անդամներ (237 աուդիտոր, 359 փորձագետ հաշվապահ) և 30 աուդիտորական կազմակերպություններ:

2025թ. ընթացքում Պալատի ռեեստրում ավելացել են 87 անձ՝ 13 աուդիտոր և 72 փորձագետ հաշվապահ անդամներ և 2 աուդիտորական կազմակերպություններ:

Հաշվետվությունը հաստատվելու ամսաթվի դրությամբ Պալատի ռեեստրում գրանցված են 654 ֆիզիկական անձ անդամներ (243 աուդիտոր, 378 փորձագետ հաշվապահ) և 33 աուդիտորական կազմակերպություններ:

2025թ. Պալատին անդամակցությունը դադարեցրել են 22 անդամներ (4 աուդիտոր, 17 փորձագետ հաշվապահ) և 1 աուդիտորական կազմակերպություն, որոնցից.

- 4 աուդիտոր՝ սեփական դիմումով,
- 10 փորձագետ հաշվապահ՝ օրենքի ուժով, 7 փորձագետ հաշվապահ՝սեփական դիմումով,
- 1 աուդիտորական կազմակերպություն՝ սեփական դիմումով:

2025թ ընթացքում ռեեստրում տեղի են ունեցել թվով 192 փոփոխություններ, որոնք յուրաքանչյուր շաբաթ ներկայացվել են Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության Հանրային վերահսկողության խորհրդին: 2025թ.-ին Պալատին անդամակցել են հետևյալ 2 աուդիտորական կազմակերպությունները՝ «Էյվի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ և «Այֆառես Քոնսալթ» ՍՊԸ:

Ստորև ներկայացված են հաշվետվությունը հաստատվելու ամսաթվի դրությամբ Պալատին անդամակցող աուդիտորական կազմակերպությունները.

1.	«Փի–Էյջ–Փի Փարթնըրզ» փակ բաժնետիրական ընկերություն
2.	«Ֆոր Էյ Քնսալթինգ» փակ բաժնետիրական ընկերություն
3.	«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
4.	«ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն
5.	«Թրասթ Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերություն
6.	«Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերություն
7.	«Փըրֆեքթ Աուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
8.	«Նեքսիա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն
9.	«Էրնսթ ընդ Յանգ» փակ բաժնետիրական ընկերություն
10.	«Պրոգրես-Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերություն
11.	«Այ Էֆ Փի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
12.	«ԹՄ Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերություն
13.	«Ալֆա Աուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
14.	«Գրանթ Թորնթոն» փակ բաժնետիրական ընկերություն
15.	«Գլոբ Աուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
16.	«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
17.	«Քրոու ընդ Ասատրյանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
18.	«Երևան-Աուդիտ Կոնսալտ» փակ բաժնետիրական ընկերություն
19.	«Մուռ Հայաստան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
20.	«Էֆ Էս Փի Ըդվայս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
21.	«Աուդիտ-Սթար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

22.	«Աուդիտ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն
23.	«ՔեյԷմՋի Քոնսալթինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
24.	«Ֆինս Աուդիտ» փակ բաժնետիրական ընկերություն
25.	«Բեյքեր Թիլլի Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն
26.	«ՋիՓի Մենեջմենթ Ըդվայզերի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
27.	«Աուդիտ պրո» փակ բաժնետիրական ընկերություն
28.	«Ջի Էմ Քոնսալթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
29.	«Էյվի քոնսալթինգ ընդ աուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
30.	«Այֆառես Քոնսալթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
31.	«ԹիՎիԷս Ընդ Փարթներս Խորհրդատվական Խումբ» փակ բաժնետիրական ընկերություն
32.	«Էկոնոմիկս աուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
33.	«Էյչ Էմ աուդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Հաշվետու տարում դիտարկվել է 435 ՇՄԶ հայտարարագիր՝ 206 աուդիտորի և 229 փորձագետ հաշվապահի: Ուսումնասիրվել և Անդամակցության հանձնաժողովին ներկայացվել է 1 դիմում ՇՄԶ պահանջների չկատարումը հարգելի համարելու վերաբերյալ:

2025թ. ընթացքում ուսումնասիրվել և Որակավորման հանձնաժողովին ներկայացվել է աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների ծրագրի որոշակի առարկաների քննություններից ազատման վերաբերյալ 68 հայտ, որակավորման վերաբերյալ՝ Պալատի խորհրդի 17.02.2021թ. թիվ 9-Լ որոշման համաձայն 107 դիմում և Պալատի խորհրդի 23.07.2021թ. թիվ 51-Լ որոշման համաձայն 7 դիմում: Ուսումնասիրվել և ներկայացվել է նաև ՇՄԶ միջոցառում ճանաչելու վերաբերյալ 120 հայտ:

Հաշվետու տարում Պալատում իրականացվել են Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման վկայականների տրման 3 միջոցառումներ:

2025թ. ընթացքում Պալատը շարունակել է ֆունկցիոնալ նոր հնարավորություններով կայքի ձևավորման աշխատանքները: Համահունչ լինելով կանաչ տնտեսության զարգացման և թվայնացման արդի միտումներին՝ ավարտվել են Պալատի կայքի միջոցով որակավորման և անդամակցության դիմումների ներկայացման էլեկտրոնային գործընթացի կազմակերպման աշխատանքները: Շտկվել են ՇՄՋ հայտարարագրերի ներկայացման, անձնական գրասենյակի կառավարման կայքի տեխնիկական որոշ խնդիրներ: Պատրաստվել են կայքի ռեեստրի ռուսերեն և անգլերեն բաժինները:

Պալատի որակավորման ծրագիրը հավատարմագրված է ACCA կողմից և Պալատի որակավորման քննությունների մասնակիցներին շնորհվել են ազատումներ ACCA 8 քննություններից:

2025թ.-ին ACCA-ի անդամության և համապատասխան քննությունները հանձնելու հիմքով Պալատի Որակավորման ծրագրի բոլոր 7 առարկաների քննություններից ազատում է ստացել 31 դիմորդ՝ 140 ազատում քննական առարկաներից: Ի լրումն նշվածի, ըստ քննությունների ազատումների վիճակագրությունը հետևյալն է.

1. 1-ին առարկայի քննությունից՝ 24 ազատում,
2. 2-րդ առարկայի քննությունից՝ 26 ազատում,
3. 3-րդ առարկայի քննությունից՝ 17 ազատում,
4. 4-րդ առարկայի քննությունից՝ 15 ազատում,
5. 5-րդ առարկայի քննությունից՝ 19 ազատում,
6. 6-րդ առարկայի քննությունից՝ 23 ազատում,
7. 7-րդ առարկայի քննությունից ՝ 16 ազատում:

Ընդհանուր դիմորդներ՝ 31, ազատումներ քննական առարկաներից՝ 140:

Հաշվետու տարում հավաքագրվել և վերլուծվել են աուդիտորական կազմակերպությունների տարեկան և եռամսյակային հաշվետվությունները, ինչպես նաև Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային

վերահսկողության խորհրդին պարբերաբար ներկայացվել են հաշվետվություններ Պալատի ռեեստրում կատարված փոփոխությունների վերաբերյալ:

2025թ.-ին Պալատ տեղափոխվել է մոտ 555 քմ ընդհանուր մակերեսով գրասենյակային նոր վերանորոգված տարածք: Նոր գրասենյակը իր կառուցվածքով և ֆունկցիոնալությամբ լիովին համապատասխանում է Պալատի պահանջներին՝ ապահովելով բնականոն գործունեության շարունակականությունը:

2. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Պալատն իրականացնում է Հաշվապահների միջազգային դաշնության ստանդարտներին համապատասխան պրոֆեսիոնալ հաշվապահի և աուդիտորի որակավորում շնորհող կրթական ծրագիր, որը ներառում է համապատասխան դասընթացների իրականացում և քննությունների անցկացում: Պալատի կողմից իրականացվող դասընթացները և քննությունները համապատասխանում են Հաշվապահների միջազգային դաշնության (այսուհետ՝ ՀՄԴ) կրթության միջազգային ստանդարտներին (IES):

Վերը նշված դասընթացները վարում են հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության ոլորտում մասնագիտական բարձր հեղինակություն ունեցող անձինք: Նշված դասընթացների նկատմամբ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում ինչպես բիզնես շրջանակները, այնպես էլ պետական մարմինները:

Պալատի որակավորման ծրագրում ներառված առարկաները հետևյալն են.

1) Ֆինանսական հաշվառման հիմունքներ,
2) Կառավարչական հաշվառում,
3) Իրավագիտության հիմունքներ և կորպորատիվ իրավունք,
4) ՀՀ հարկային օրենսդրություն,
5) Ֆինանսական կառավարում,
6) Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում,
7) Աուդիտ և հավաստիացում:

Պալատի որակավորման ծրագիրը հաջողությամբ ավարտելուց հետո, ինչպես նաև անհրաժեշտ մասնագիտական աշխատանքային փորձ ունենալու դեպքում, մասնակիցներին տրվում են ՀՀ օրենսդրությանը և ՀՄԴ կրթության միջազգային ստանդարտներին (IES) համապատասխանող փորձագետ հաշվապահի և/կամ աուդիտորի որակավորումներ: Փորձագետ հաշվապահի որակավորման համար անհրաժեշտ է հանձնել առաջին 6, իսկ աուդիտորի որակավորման համար՝ ծրագրի բոլոր 7 քննությունները:

Պալատի որակավորման ծրագրի դասընթացները 2025 թվականի ընթացքում տեղի են ունեցել 2 կիսամյակով:

2025թ. առաջին կիսամյակը մեկնարկել է մարտ ամսին: Ստորև ներկայացված է ծրագրի 7 առարկաների խմբերի և մասնակիցների քանակը՝

1. Ֆինանսական հաշվառման հիմունքներ՝ 4 խումբ, 101 մասնակից,
2. Կառավարչական հաշվառում՝ 2 խումբ, 56 մասնակից,
3. Իրավագիտության հիմունքներ և կորպորատիվ իրավունք՝ 2 խումբ, 61 մասնակից,
4. ՀՀ հարկային օրենսդրություն՝ 3 խումբ, 86 մասնակից,
5. Ֆինանսական կառավարում՝ 4 խումբ, 102 մասնակից,
6. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում՝ 2 խումբ, 56 մասնակից,
7. Աուդիտ և հավաստիացում՝ 1 խումբ, 12 մասնակից:

Ընդամենը մասնակիցներ՝ 474:

2025թ. երկրորդ կիսամյակը մեկնարկել է հոկտեմբեր ամսին: Ստորև ներկայացված է ծրագրի 7 առարկաների խմբերի և մասնակիցների քանակը՝

1. Ֆինանսական հաշվառման հիմունքներ՝ 4 խումբ, 116 մասնակից,
2. Կառավարչական հաշվառում ՝ 2 խումբ,63 մասնակից,
3. Իրավագիտության հիմունքներ և կորպորատիվ իրավունք՝ 2 խումբ, 70 մասնակից,
4. ՀՀ հարկային օրենսդրություն՝ 4 խումբ, 114 մասնակից,
5. Ֆինանսական կառավարում ՝ 3 խումբ, 75 մասնակից,
6. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում՝ 4 խումբ, 102 մասնակից,
7. Աուդիտ և հավաստիացում՝ 1 խումբ, 25 մասնակից:

Ընդամենը մասնակիցներ՝ 565:

3. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2024թ.-ին Պալատի որակավորման ծրագրի երկրորդ կիսամյակի դասընթացների քննաշրջանը կայացել է 2025թ. հունվար ամսին: Ստորև ներկայացված է ծրագրի 7 առարկաների քննության մասնակիցների քանակը՝

1. Ֆինանսական հաշվառման հիմունքներ՝ 169 մասնակից,
2. Կառավարչական հաշվառում՝ 101 մասնակից,
3. Իրավագիտության հիմունքներ և կորպորատիվ իրավունք՝ 104 մասնակից,
4. ՀՀ հարկային օրենսդրություն՝ 193 մասնակից,
5. Ֆինանսական կառավարում ՝ 88 մասնակից,
6. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում՝ 124 մասնակից,
7. Աուդիտ և հավաստիացում՝ 22 մասնակից:

Ընդամենը մասնակիցներ՝ 801:

2025թ.-ին Պալատի որակավորման ծրագրի առաջին կիսամյակի քննաշրջանը կայացել է հուլիս ամսին: Ստորև ներկայացված է ծրագրի 7 առարկաների քննության մասնակիցների քանակը՝

1. Ֆինանսական հաշվառման հիմունքներ՝ 175 մասնակից,
2. Կառավարչական հաշվառում՝ 113 մասնակից,
3. Իրավագիտության հիմունքներ և կորպորատիվ իրավունք՝ 125 մասնակից,
4. ՀՀ հարկային օրենսդրություն՝ 185 մասնակից,
5. Ֆինանսական կառավարում ՝ 137 մասնակից,
6. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում՝ 101 մասնակից,
7. Աուդիտ և հավաստիացում՝ 21 մասնակից:

Ընդամենը մասնակիցներ՝ 857:

2026թ.-ին Պալատի որակավորման ծրագրի առաջին քննաշրջանի մասնակիցների քանակը եղել է 943:

4. ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Պալատի անդամների շարունակական մասնագիտական զարգացման պահանջը սահմանված է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 17-րդ, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 25-րդ և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածների համաձայն: Այն հանդիսանում է նաև Հաշվապահների միջազգային դաշնության կրթական 7-րդ ստանդարտի պահանջ: ՀՄԴ կրթական ստանդարտների համաձայն Պալատի անդամի շարունակական մասնագիտական զարգացման իրականացումը հանդիսանում է Պալատի կողմից ստանձնած ՀՄԴ անդամակցության պարտադիր պահանջ:

Շարունակական մասնագիտական զարգացման նպատակն է տնտեսության տարբեր բնագավառներում Պալատի անդամից պահանջվող մասնագիտական աշխատանքի բարձր ստանդարտների ապահովման համար անհրաժեշտ գիտելիքների պարբերաբար նորացումը: Այն հնարավորություն կտա հանրությանը տրամադրել բավարար երաշխիքներ, որ Պալատի անդամը տիրապետում է հաշվապահական հաշվառման, հարկային, ֆինանսական հաշվետվությունների պատրաստման, աուդիտի և մասնագիտությանն առնչվող ոլորտների վերաբերյալ մասնագիտական արդի գիտելիքներին: Աուդիտորը և փորձագետ հաշվապահը պարտավոր են որակավորման վկայականը ստանալու տարվան հաջորդող տարվանից սկսած անցնել շարունակական մասնագիտական զարգացում: Շարունակական մասնագիտական զարգացման տևողությունը յուրաքանչյուր օրացուցային տարվա համար չպետք է պակաս լինի 20 ժամից, իսկ յուրաքանչյուր երկու հաջորդական տարիների համար չպետք է պակաս լինի 80 ժամից:

2025թ.-ի ընթացքում կազմակերպվել է 55 ՇՄԶ միջոցառում, 134.5 ժամ տևողությամբ, որոնց մասնակցել են 5623 առկա և առցանց մասնակիցներ: Ստորև ներկայացված են ՇՄԶ միջոցառումների թեմաները և մասնակիցների քանակը՝ ըստ ամիսների:

Հունվար ՝

1. Թեմա՝ «ՖՀՄՍ 16 - Վարձակալություն», մասնակից՝ 53,

2. Թեմա՝ «Խեղաթյուրումների գնահատում», մասնակից՝ 56,

Փետրվար՝

1. Թեմա՝ «Ֆիզիկական անձանց եկամուտների հայտարարագրման քայլերի հաջորդականությունը», մասնակից՝ 79,
2. Թեմա՝ «Աշխատանքային պայմանագրի կնքումը էլեկտրոնային թվային համակարգով, աշխատաժամերի հնարավոր փոփոխությունների ներկայացում, և հարց ու պատասխան», մասնակից՝ 62,
3. Թեմա՝ «ԱՄՍ 540 – Հաշվապահական հաշվառման գնահատումների, ներառյալ իրական արժեքի հաշվապահական հաշվառման գնահատումների և դրանց հետ կապված բացահայտումների աուդիտ, ԱՄՍ 620 – Աուդիտորի փորձագետի աշխատանքի օգտագործումը», մասնակից՝ 47,

Մարտ՝

1. Թեմա՝ «ՓՄԿ ՖՀՄՍ և (հանրային հաշվետվություն չունեցող դուստր ընկերություններ) ՖՀՄՍ 19 ընդհանուր դրույթներ», մասնակից՝ 69,
2. Թեմա՝ «Scope Decomposition – աուդիտորական գործընթացների արդյունավետ տրոհում», մասնակից՝ 43,
3. Թեմա՝ «ԱՄՍ 230 – Աուդիտի փաստաթղթավորումը, ԱՄՍ 520 – Վերլուծական ընթացակարգեր», մասնակից՝ 86,
4. Թեմա՝ «Աուդիտորական ընթացակարգերի կիրառում», մասնակից՝ 77,

Ապրիլ՝

1. Թեմա՝ «Հաշվային պլանի քննարկում», մասնակից՝ 3,
2. Թեմա՝ «ՀՀՄՍ 12 - Շահութահարկեր», մասնակից՝ 132,
3. Թեմա՝ «Տրանսֆերային գնագոյացման վարչարարություն», մասնակից՝ 76,
4. Թեմա՝ «Շահութահարկ, հարց և պատասխան», մասնակից՝ 124,
5. Թեմա՝ «Ոչ ռեզիդենտների շահութահարկով հարկման ընթացակարգերի համառոտ ներկայացում (Օրենսգիրք, կրկնակի հարկումը բացառող համաձայնագրեր), հարկման ընթացակարգերին վերաբերող հարցերի, խնդիրների քննարկում, կարծիքների փոխանակում», մասնակից՝ 91:

6. Թեմա՝ «Ավելացված արժեքի հարկի փոփոխությունները, հարց և պատասխան», մասնակից՝ 92,
7. Թեմա՝ «ISQM 1 - Որակի կառավարման միջազգային ստանդարտ 1», մասմակից՝ 92:

Մայիս՝

1. Թեմա՝ «Փոխառության ծախսումներ», մասնակից՝ 63,
2. Թեմա՝ «Հարկային գործակալի կողմից ոչ ռեզիդենտին եկամուտների վճարման փաստի և դրանց նկատմամբ շահութահարկի հաշվարկման համապատասխան տոկոսադրույքների կիրառումը, ոչ ռեզիդենտին վճարվող եկամուտների նկատմամաբ շահութահարկի և ԱԱՀ-ի հաշվարկման հնարավոր ընթացակարգերը, կրկնակի հարկումը բացառող և հարկերի վճարումից խուսափումը կանխող համաձայնագրերի կիրառման ընդհանուր ընթացակարգերը», մասնակից՝ 121,
3. Թեմա՝ «Կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի կիրառում», մասնակից՝ 111:

Հունիս՝

1. Թեմա՝ «Աշխատանքային պայմանագրի կնքումը էլեկտրոնային թվային համակարգով, հարց ու պատասխան», մասնակից՝ 103,
2. Թեմա՝ «Շահութահարկ», մասնակից՝ 123,
3. Թեմա՝ «Ապագայի հաշվետվություններ՝ ո՞ր ցուցանիշներն են իրականում օգնում արդյունավետ կառավարել ֆինանսները», մասնակից՝ 94,
4. Թեմա՝ «Ռիսկերի գնահատում», մասնակից՝ 109,
5. Թեմա՝ «Ավելացված արժեքի հարկ, հարց և պատասխան», մասնակից՝ 130,
6. Թեմա՝ «ՖՀՄՍ - 9 Ֆինանսական ակտիվների դասակարգումները, վերադասակարգումները և վերափոխումները», մասնակից՝ 100:

Հուլիս՝

1. Թեմա՝ «Earned Value Analysis (EVA)՝ նախագծի ծախսերի և ժամկետների շեղումների կանխատեսման և կառավարման գործիք», մասնակից՝ 60,

2. Թեմա՝ «ՖՀՄՍ 18 – Ֆինանսական հաշվետվություններում ներկայացումը և բացահայտումը», մասնակից՝ 134,
3. Թեմա՝ «Կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի կիրառում», մասնակից՝ 79:

Օգոստոս՝

1. Թեմա՝ «Աշխատանքային օրենսգրքի առավել կիրառելի կարգավորումները», մասնակից՝ 92,
2. Թեմա՝ «Շահութահարկ, հարց և պատասխան», մասնակից՝ 81,
3. Թեմա՝ «ԱՄՍ 320 - Վերլուծական ընթացակարգեր և ԱՄՍ 540 - Հաշվապահական հաշվման գնահատումների աուդիտ», մասնակից՝ 91:
4. Թեմա՝ «Աուդիտորական ապացույցներ», մասնակից՝ 79,
5. Թեմա՝ «Որակի կառավարում – հաշվապահական և աուդիտորական գործընթացներում՝ գործիքներ, սխալներ, մեթոդներ», մասնակից՝ 86,
6. Թեմա՝ «Ոչ ռեզիդենտի շահութահարկ – ՀՀ հարկային օրենսգրքի և կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի հիմնական դրույթների ներկայացում, դրանց շրջանակում առաջացող հարցերի և խնդիրների քննարկում», մասնակից՝ 102:

Սեպտեմբեր՝

1. Թեմա՝ «ԱՄՍ 530 – Աուդիտորական ընտրանք և ԱՄՍ 230 – Էականությունը աուդիտի պլանավորման և իրականացման գործընթացում», մասնակից՝ 104,
2. Թեմա՝ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին օրենքում կատարված փոփոխությունները և լրացումները», մասնակից՝ 183,
3. Թեմա՝ «ՀՀ հարկային օրենսդրության սեպտեմբերի 1-ից ուժի մեջ մտած փոփոխությունները», 148 մասնակից:

Հոկտեմբեր՝

1. Թեմա՝ «Ֆինանսական տեխնոլոգիաներ (FINTECH)՝ աուդիտորների և հաշվապահների համար», մասնակից՝ 120,
2. Թեմա՝ «Ավելացված արժեքի հարկ, հարց և պատասխան», մասնակից՝ 177,

3. Թեմա՝ «Աշխատանքային օրենսգրքի ամենակիրառելի կարգավորումները, հարց և պատասխան», մասնակից՝ 156,
4. Թեմա՝ «Խմբի ֆինանսական հաշվետվությունների աուդիտների հիմնական փոփոխությունները՝ վերանայված ԱՄՍ 600-ի համաձայն», մասնակից՝ 104,
5. Թեմա՝ «Կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի կիրառումը», մասնակից՝ 129:

Նոյեմբեր՝

1. Թեմա՝ «ԱՄՍ 320 – Էականությունը աուդիտի պլանավորման և իրականացման գործընթացում և ԱՄՍ 510 – Սկզբնական աուդիտի առաջադրանքներ – սկզբնական մնացորդներ», մասնակից՝ 140,
2. Թեմա՝ «ՖՀՄՍ թարմացումներ, ներառյալ ՖՀՄՍ 18 - Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում», մասնակից՝ 143,
3. Թեմա՝ «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին օրենքում կատարված փոփոխությունները և լրացումները, հարց և պատասխան», մասնակից՝ 124,
4. Թեմա՝ «ՀՀՄՍ 36 - Դրամաստեղծ միավորի գծով արժեզրկման հաշվառման առանձնահատկությունները», մասնակից՝ 124,
5. Թեմա՝ «ESG - (Environmental, Social and Governance) հաշվետվություններ՝ հաշվապահների և աուդիտորների համար նոր մարտահրավերները», մասնակից՝ 99:
6. Թեմա՝ «Ոչ ռեզիդենտի շահութահարկով հարկման դասընթացների շրջանակներում 2025թ.-ին ներկայացված ընթացակարգերի ամփոփում, հարցերի և խնդիրների քննարկում (ՀՀ հարկային օրենսգիրք, Կրկնակի հարկումը բացառող համաձայնագրեր)», մասնակից՝ 123,
7. Թեմա՝ «ԱՄՍ - 570 - Կազմակերպության գործունեության անընդհատությունը (փոփոխված 2024թ.)», մասնակից՝ 93:

Դեկտեմբեր՝

1. Թեմա՝ «Աշխատանքային օրենսգրքի ամենակիրառելի կարգավորումները, հարց և պատասխան», մասնակից՝ 169,

2. Թեմա՝ «Տրանսֆերային գնագոյացում», մասնակից՝ 116,
3. Թեմա՝ «Աուդիտի որակի կառավարում», մասնակից՝ 128,
4. Թեմա՝ «Որակի վերահսկմանն առնչվող խնդիրների քննարկում», մասնակից՝ 94,
5. Թեմա՝ «Ավելացված արժեքի հարկ, հարց և պատասխան», մասնակից՝ 125,
6. Թեմա՝ «ԱՄՍ 240 – Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում խարդախության հետ կապված աուդիտորի պատասխանատվությունը», մասնակից՝ 84:

2025թ.-ի ընթացքում Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված անձինք մասնակցել են 46 ՇՄՋ դասընթացի:

5 ԱՅԼ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Պալատը կազմակերպում է նաև 50 ժամ տևողությամբ «Հաշվապահական հաշվառում և հարկային օրենսդրություն» թեմայով դասընթաց սկսնակ և գործող հաշվապահների համար: Դասընթացը ներառում է հետևյալ բաժինները՝

- Հաշվապահական հաշվառման էությունը և խնդիրները, հաշվապահական հաշիվները, հաշվապահական հաշվառման հաշվային պլանը, փաստաթղթավորումը, ֆինանսական հաշվետվության կազմը և կառուցվածքը,
- Ոչ ընթացիկ ակտիվների հաշվառումը,
- Ընթացիկ ակտիվների հաշվառումը,
- Սեփական կապիտալի հաշվառումը,
- Պարտավորությունների հաշվառումը,
- ՀՀ հարկային օրենսդրության հիմունքները՝ հարկերի տեսակները, դրույքաչափերը, հաշվառումը և պատասխանատվությունը հարկային օրենսդրությունը խախտելու դեպքում:

2025թ. ընթացքում կազմակերպվել է «Հաշվապահական հաշվառում և հարկային օրենսդրություն» թեմայով 2 դասընթաց՝ սկսնակ և գործող հաշվապահների համար, որին մասնակցել են՝ 17 մասնակից՝ որից 6-ը Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված:

6 ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2025թ.-ին, հիմք ընդունելով Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի խորհրդի արտաքին գնահատման ենթակա աուդիտորական կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին 28.11.2024թ. N27 որոշումը, 13 աուդիտորական կազմակերպությունում կազմակերպվել է աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման պլանային արտաքին գնահատում և մի շարք կազմակերպություններում մշտադիտարկում: Արտաքին գնահատումը իրականացվում է ՀՀ Ֆինանսների նախարարի աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման ընթացակարգերը հաստատելու մասին 07.10.2022թ N 420-Ն հրամանով սահմանված ընթացակարգի համապատասխան:

Հաշվետու տարում պլանային արտաքին գնահատման աուդիտորական կազմակերպություններն են.

1. «ՊՐՈԳՐԵՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ
2. «ՋԻՓԻ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԸԴՎԱՅՋԵՐԻ» ՍՊԸ
3. «ԲԻ-ԴԻ-Օ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
4. «ՓԻ–ԷՅՋ–ՓԻ ՓԱՐԹՆԵՐԶ» ՓԲԸ
5. «ՓՐԱՅՍՈՒՈԹԵՐՀԱՈՒՍԿՈՒՊԵՐՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ
6. «ԷՅ-ԷՄ-ԷՅՉ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ
7. «ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» ՓԲԸ
8. «ՖԻՆՍ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ
9. «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ
10. «ԹՄ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ
11. «ԵՐԵՎԱՆ-ԱՈՒԴԻՏ ԿՈՆՍԱԼՏ» ՓԲԸ
12. «ՔԵՅԷՄՋԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ
13. «ԱՈՒԴԻՏ ՊՐՈ» ՓԲԸ

7 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐ

ՀՄԴ անդամակցություն

Պալատը 2005թ.-ից հանդիսանալով Հաշվապահների միջազգային դաշնության (ՀՄԴ) թղթակից անդամ, իր մասնագիտական գործունեությունն իրականացնում է համաձայն այդ կառույցի կողմից սահմանված միջազգային ստանդարտների: Ամբողջ աշխարհում աուդիտ և հաշվապահություն մասնագիտությունների համաշխարհային մասնագիտական մարմին ճանաչված հեղինակավոր այս կառույցին անդամակցում են 130 երկրներում գործող 180 կազմակերպություններ, որոնցում ընդգրկված են կառավարման մարմիններ, հասարակական տարբեր կառույցներ, տնտեսության, կրթության, գիտության և այլ ոլորտները ներկայացնող 3 մլն. պրոֆեսիոնալ հաշվապահներ, ներառյալ՝ աուդիտորներ, կառավարչական հաշվառման մասնագետներ, հարկային խորհրդատուներ, ներքին աուդիտորներ: Պալատը ՀՄԴ անդամակցությամբ ստանձնել է մի շարք պարտավորություններ, այդ թվում՝ որակի և մասնագիտական միջազգային ստանդարտների ապահովման, միջազգային կրթական ստանդարտներով որակավորման գործընթացի կազմակերպման և այլն: Այդ նպատակներին հասնելու համար 2025թ.-ին Հայաստան էր այցելել Հաշվապահների միջազգային դաշնության անդամակցության պատասխանատուն: Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատում ՀՄԴ ներկայացուցչի հետ տեղի են ունեցել հանդիպումներ և քննարկումներ ներկայացուցչական բավականին լայն կազմով, օրակարգային հարցերի ընդգրկուն ծավալով և միջոցառումների հագեցած ծրագրով: Հանդիպումների և քննարկումների ընթացքում ներկայացվել են ոլորտի զարգացումները, մասնավորապես ՀՄԴ անդամակցությամբ Պալատի ստանձնած պարտավորությունների կատարման, մասնագիտական միջազգային ստանդարտների թարգմանության և ընդունման, միջազգային կրթական ստանդարտներին համապատասխան որակավորման գործընթացի զարգացման ուղղությամբ կատարված քայլերը, առկա ձեռքբերումները, խնդիրներն ու ծրագրերը:

Մասնակցություն տարածշրջանային մասնագիտական կառույցներին

2021թ. դեկտեմբերի 9-ին Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի նախագահը ստորագրել է միջազգային համագործակցության երկու համաձայնագիր՝ միտված ոլորտում ԵԱՏՄ և ԱՊՀ երկրների մասնագիտացված կազմակերպությունների ջանքերը համատեղող երկու կառույցների ստեղծմանը, որոնց գործունեությունը նպատակաուղղված կլինի համաձայնագրի շրջանակներում կարգավորման անհրաժեշտություն ունեցող խնդիրների լուծմանը և արդյունավետ համագործակցության արդյունքում մասնագիտության զարգացմանն ու առաջընթացին:

1. Համաձայնագիր հաշվապահների և աուդիտորների եվրասիական խումբ ստեղծելու մասին

Կառույցը, որը միավորում է ԱՊՀ երկրների 10 գործող մասնագիտացված կառույցների, ձգտում է դառնալ ՀՄԴ ցանցային անդամ: Հիմնական նպատակն է մասնագիտության առջև ծառացած խնդիրների համատեղ լուծումը, միջազգային ստանդարտների մշակումը, դրանց նախագծերի քննարկումը, թարգմանությունը, կլոր սեղանների, կոնֆերանսների, սիմպոզիումների և նմանատիպ այլ միջոցառումների կազմակերպումը:

2. Համաձայնագիր Եվրասիական տնտեսական միության աուդիտորների խորհրդատվական մարմին ստեղծելու մասին

Մարմինը միավորում է ԵԱՏՄ երկրների մասնագիտացված կառույցներին, հիմնական նպատակը մասնակից կազմակերպությունների աուդիտորական գործունեության հետ կապված իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է, աուդիտորական միասնական շուկա մուտքով պայմանավորված՝ մասնագիտացված կառույցների առջև ծառացող խնդիրների լուծումը, աուդիտորական ծառայությունների շուկայի ընդլայնման համար պայմանների ստեղծումը:

2025թ. հաշվապահների և աուդիտորների Եվրասիական խումբը նախագահել է Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների Պալատի խորհրդի անդամ Թաթուլ Մովսիսյանը:

2025թ. ընթացքում շարունակել են աշխատանքները Հաշվապահների և աուդիտորների եվրասիական խմբի 6, իսկ Եվրասիական տնտեսական միության աուդիտորների

խորհրդատվական մարմնի 5 հանձնաժողովներ, որոնց մեջ ներառվել են, ինչպես նաև մեկական հանձնաժողովներ ղեկավարում եմ Պալատի անդամները:

2025թ. ընթացքում կայացել են Հաշվապահների և աուդիտորների եվրասիական խմբի 6, իսկ Եվրասիական տնտեսական միության աուդիտորների խորհրդատվական մարմնի 5 նիստեր: